Սոցիալական արդարության կենտրոնը ԵԱՀԿ միջազգային մրցանակի 2022թ. Հաղթած կազմակերպություն

Այսօր մեզ համար ամենակարևոր օրն է: Սոցիալական արդարության կենտրոնը, երկրում ոչ գերիշխող էթնիկ խմբերին աջակցելու իր ջանքերի համար, դարձել է ԵԱՀԿ ազգային փոքրամասնությունների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի հեղինակավոր Max van der Stoel Global մրցանակի թթ դափնեկիր:

Այս մրցանակը մարդու իրավունքների ոլորտում կարևոր մրցանակներից է, որը հիմնադրվել է 2001 թվականին և շնորհվում է կազմակերպություններին և անհատներին՝ իրենց երկրներում էթնիկ/ազգային փոքրամասնությունների ուղղությամբ իրենց հատուկ աշխատանքի և ձեռքբերումների համար:

«Սոցիալական արդարության կենտրոնը անխոնջ պայքարում է երկրի բոլոր սոցիալական խմբերի իրավահավասարության համար, այդ իսկ պատճառով ժյուրին անանուն քվեարկության արդյունքում այս տարվա մրցանակը շնորհեց այս կազմակերպությանը»,- ասված է ԵԱՀԿ մամուլի հաղորդագրությունում:

Մենք շատ երախտապարտ ենք ԵԱՀԿ ազգային փոքրամասնությունների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակին այս մրցանակի համար, և այստեղ մեր հատուկ շնորհակալությունն ենք հայտնում Վրաստանում Շվեյցարիայի դեսպանատան ներկայացուցչությանը, այս մրցանակին մեր առաջադրումը նախաձեռնելու համար:

Շնորհակալություն մեր կազմակերպության յուրաքանչյուր աշխատակցի՝ անխոնջ աշխատանքի և հավասարության ու ազատության հանդեպ հավատքի համար, որը միշտ եղել է մեր աշխատանքի հիմնական մեկնարկը:

Մեր աշխատանքը, յուրաքանչյուր ձեռքբերում և հաղթանակ հիմնված է Վրաստանում համերաշխ, ներառական և արդար հասարակություն կառուցելու համար ոչ գերիշխող էթնիկ և կրոնական խմբերի անխոնջ աշխատանքի վրա: Մենք հավատում ենք, որ այս մրցանակի հաղթողները բոլոր նրանք են, ովքեր ներգրավված են ակտիվիզմով, համայնքային աշխատանքով և ինքնակազմակերպման պրակտիկայով ոչ գերիշխող խմբերի շրջանակներում՝ վերջ դնելու համակարգային խտրականությանը և հասնելու փոխակերպող փոփոխությունների: